Քննարկվել և հաստատվել է
Խորհրդի 13.02.2023թ. թիվ 02 նիստում

Խորհրդի նախագահ՝ Ա. Եսայան

ՏՆՕՐԵՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի 2022 թվականի գործունեության վերաբերյալ

2022թ. ուսումնարանում դասերը կազմակերպվել է 1 հերթափոխով, շաբաթական 36 դասաժամով:
Ուսումնարանում սահմանված է 5-օրյա աշխատանքային շաբաթ:
Ուսումնական գործընթացը կազմակերպվել է առկա եղանակով, բացառությամբ 2022թ. փետրվարի 8-21–ն ընկած ժամահատվածի՝ կորոնավիրուսային հիվանդության սրացման պատճառով ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով ուսումնական հաստատությունը անցել է հեռավար ուսուցման: Դասախոսները հեռավար դասերն անցկացրել են լիարժեք պատրաստված՝ օգտագործելով տարբեր հարթակներ, գործիքներ, տեսադասեր, տեսանյութեր, վիրտուալ լաբորատորիաներ և այլ միջոցներ:

2022թ. ընթացքում ուսումնարանում գործել են «Ոսկերչություն՝ ոսկերիչ», «Գեղանկարչություն և քանդակագործություն՝ փորագրող փայտյա գեղարվեստական իրերի», «Համակարգիչների շահագործում՝ համակարգիչների օպերատոր», «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում՝ ռադիոմեխանիկ՝ ռադիոհեռուստատեսային սարքավորումների նորոգման և սպասարկման», «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում՝ վարսահարդար», «Խոհարարական գործ՝ խոհարար», «Վերականգնող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում՝ արևային էներգետիկկայանների մոնտաժման, նորոգման և սպասարկման էլեկտրիկ-փականագործ»» մասնագիտական կուրսերը: «Խոհարարական գործ» և «Վերականգնող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտությունները ներդրված է որպես փորձարարական ծրագրեր:
«Խոհարարական գործ՝ խոհարար» մասնագիտական առաջին, երկրորդ և երրորդ կուրսերում ներդրված է երկակի /դուալ/ ուսուցման համակարգ: 2022թ. առաջին կիսամյակում 50, իսկ երկրորդ կիսանյակում 48 ուսանող ուսումնարանի և Գյումրի քաղաքի հասարակական սննդի կազմակերպությունների հետ կնքված համապատասխան համաձայնագրերի և պայմանագրերի հիման վրա ուսումնական պլանով նախատեսված գործնական դասերը անցկացրել են թվով 18 համագործակցող կազմակերպությունների խոհանոցներում:
Դուալ համակարգում ընդգրկված «Խոհարարական գործ» մասնագիտությամբ սովորող ուսանողներից բացի, գործատուների մոտ շաբաթական մեկ օր իրենց գործնական ուսուցման դասերն են անցկացրել «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում՝ վարսահարդար» մասնագիտական կուրսերի ուսանողները, արտադրական պրակտիկաները ևս կազմակերպվել են համապատասխան գործատու կազմակերպություններում :
Տարբեր մասնագիտությունների գծով համագործակցող գործատու կազմակերպությունների թիվը կազմում է 73, 2022թ ակտիվ համագործակցները՝ 43, որից 18-ը դուալ ուսուցման համակարգով:

2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաստատությունում ուսանողների թիվը կազմել է 260, դեկտեմբերի 30-ին՝ 224:
Ներքին կարգապահական կանոնները խախտելու՝ բացակայությունների պատճառով ուսումնարանից հեռացվել է 10 ուսանող:
Ծնողի դիմումի համաձայն ազատվել է 6 ուսանող, որից 4 –ը մեկնել են ՌԴ:
Պարտադիր զինվորական ծառայության մեկնել է 52 ուսանող, 10՝ վերադարձել:
Վերականգնվել է 1 ուսանողի ուսանողական իրավունքը:
2 ուսանող տեղափոխվել են հանրակրթական դպրոց ոչ ճիշտ մասնագիտություն ընտրելու, ինչպես նաև ճանապարհածախսի պատճառով:

Ուսումնարանի աշխատակիցների թիվը դեկտեմբեր 30-ին կազմել է 50 /ներառյալ հղիության և ծննդաբերության և երեխայի խնամքի արձակուրդում գտնվող 1 անձ/, որից 35 մանկավարժ ընդգրկված են մանկավարժական խորհրդի կազմում: Դասախոսներից 30-ը ունեն բարձրագույն կրթություն /2-ը գիտության թեկնածու/, 5-ը՝ միջին մասնագիտական:
Տարվա ընթացքում առաջացել են թափուր տեղեր՝ հասարակագիտություն, ֆիզկուլտուրա, անգլերեն առարկաների դասախոսների, զինղեկի, «Գեղանկարչություն և քանդակագործություն» և «Վերականգնող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտական կուրսերի վարպետների: Համաձայն կարգի ընդունվել են հասարակագիտություն, ֆիզկուլտուրա, անգլերեն առարկաների դասախոսներ և զինղեկ, մյուս հաստիքները մնացել են թափուր:

Հաստատությունում ուսումնական գործընթացը կազմակերպվել է հիմնվելով կրթության զարգացման պետական ծրագրի իրականացման, ուսումնական հաստատության զարգացման ծրագրի, պետական կրթական չափորոշիչների կիրառման, ուսումնական պլանով նախատեսված ուսումնական գործընթացի ժամանակացույցի, կրթության իրավունքի, կրթական ծրագրերի յուրացման ապահովման և այլ նորմատիվային փաստաթղթերի հիման վրա:
Համապատասխան կարգերի համաձայն հաստատությունում կազմակերպվել է ուսանողների ընդունելության, փոխադրման և շրջանավարտների ավարտման գործընթացները:

«Համակարգիչների շահագործում՝ համակարգիչների օպերատոր», «Ոսկերչություն՝ ոսկերիչ», «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում՝ վարսահարդար» «Խոհարարական գործ խոհարար», «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում՝ ռադիոմեխանիկ՝ ռադիոհեռուստատեսային սարքավորումների նորոգման և սպասարկման» մասնագիտություններով սովորող 96 շրջանավարտ ստացել է պետական նմուշի ավարտական փաստաթուղթ՝ դիպլոմ, որից 5-ը՝ գերազանցության, 1 շրջանավարտ պետական որակավորման քննությանը չմասնակցելու պատճառով չի ավարտել ուսումնարանը, 1 շրջանավարտ պետական քննություններից ստացել է անբավարար գնահատական:

Որակավորման հանձնաժողովների հաշվետվությունները ներկայացվել է նախարարություն, եզրակացություններն ու առաջարկությունները քննարկվել են մասնագիտական մեթոդմիավորման, մանկավարժական խորհրդի և կառավարման խորհրդի նիստերում:

2022 թ. շրջանավարտներից 33-ը զորակոչվել է ազգային բանակ, 42-ը ընդունվել է աշխատանքի, որից ըստ մասնագիտության 21-ը՝ ոչ մասնագիտությամբ 21-ը: Նախորդ երեք տարիների շրջանավարտներից 2022թ ընթացքում աշխատանքի են տեղավորվել ևս 37-ը:

2022 թվականին ուսանողների ընդունելությունն իրականացվել է ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատված ընդունելության կարգի համաձայն՝ կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով:
Ըստ ընդունող հանձնաժողովի աշխատանքային պլանի ժամանակին և պատշաճ կազմակերպել է ընդունելության գործընթացը, արդյունքների վերաբերյալ պահանջվող հաշվետվությունը ներկայացվել է նախարարություն և քննարկվել կառավարման խորհրդի նիստում:
2022թ-ին ուսումնարան հիմնական կրթության հիմքով անվճար հիմունքներով ընդունվել են 80 ուսանող:

2022թ. ուսումնարանում, համաձայն ուսումնադաստիարակչական աշխատանքների ծրագրի և նախահաշվի, կատարվել են նախատեսված ֆինանսական, ուսումնադաստիարակչական, ուսման որակի բարելավման ուղղությամբ աշխատանքներ:
Կրթության որակի վերահսկման նպատակով տնօրինության կողմից բոլոր առարկաներից տրվել է կիսամյակային գրավոր աշխատանքներ, մասնագիտական մոդուլներից անցկացվել կարողությունների ստուգում:
Կրթության որակի բարձրացման նպատակով պարբերաբար տեղի են ունեցել քննարկումներ մանկավարժական և կառավարման խորհուրդների նիստերում, ինչպես նաև գործատուների հետ:
Կատարվել են աշխատանքներ համակողմանիորեն և ներդաշնակ զարգացած հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձ ձևավորելու նպատակով:

2022թ-ի ընթացքում անցկացվել են նիստեր՝ մանկավարժական խորհրդի՝ 15՝ 10 հերթական և 5 արտահերթ, ծնողական խորհրդի՝ 4, որոնց ընթացքում քննարկվել են ուսումնադաստիարակչական և տնտեսական աշխատանքների, ուսանողների շարժի, ֆինանսական, տարաբնույթ միջոցառումների, կազմակերպչական, կարգապահական, ուսման որակի բարձրացման և ընդհանուր գործունեության վերաբերյալ այլ հարցեր:

Ուսանողական խորհուրդը անցկացրել է 6 հերթական, 3 արտահերթ նիստ, քննարկվել է կազմակերպչական, կարգապահական հարցեր, նաև գործող «Ուսանողական ընկերություններ»-ի վերաբերյալ քննարկումներ:

Հումանիտար, բնագիտամաթեմատիկական և մասնագիտական մեթոդական միավորումները, համաձայն իրենց աշխատանքային պլանի, անցկացրել են ամենամսյա նիստեր, իրականացրել ժամաբաշխում, առարկայական դասալսումներ, դրվածքի ուսումնասիրություններ և համապատասխան այլ աշխատանքներ:

Ուսումնարանում գործող ուսանողական և ծնողական խորհուրդները, համաձայն իրենց գործունեության կարգի, ակտիվ մասնակցել են հաստատության կառավարման, կազմակերպչական աշխատանքներին, կազմակերպել ժողովներ, հանդիպումներ, միջոցառումներ:

Տարվա ընթացքում հետևողական աշխատանք է տարվել ուսանողների բացակայությունների հաշվառման և կանխման ուղղությամբ, կատարվել են տնային այցեր, կազմակերպվել ծնողական ժողովներ, հանդիպումներ բացակայող և ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների ծնողների հետ և տարվել բացատրական աշխատանքներ: Կատարվել է ուսանողների առաջադիմության ցուցանիշների հաշվառում, հսկում:

Ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման նպատակով ուսուցանվող մասնագիտությունների բոլոր մոդուլների համար մշակվել և ստեղծվել են ուսումնառության և դասավանդման նյութեր: Ուսումնական գործունեության ապահովման համար առկա են անհրաժեշտ տեղեկատվական նյութեր, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ և ուսումնադիդակտիկ պարագաներ: Ուսումնարանի գույքը, լաբորատոր սարքավորումները, տեխնիկական միջոցները, սարք-սարքավորումները բավարար քանակությամբ են:

Տնօրենի տեղակալ՝ **Անուշ Մկրտչյանի և** վարպետ-դասախոս **Ալեքսան Նազարյանի**, կողմից մշակվել է «Էլեկտրոնային կառավարմամբ կենցաղային սարքերի նորոգում և սպասարկում» վերնագրով ձեռնարկը, որը հրատարակվել է ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից և գործածության մեջ դրվել ուսումնական հաստատություններում:

Ուսումնական, կազմակերպչական և դաստիարակչական աշխատանքների բարելավման նպատակով մշակվել է ներքոնշյալ կարգերը , որոնք քննարկվել և հաստատվել են են Խորհրդի կողմից.

1. «Ուսումնարանի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների և շրջանավարտների հարցման» կանոնակարգ
2. Ուսանողական խորհրդի կանոնակարգ
3. Պրակտիկայի կազմակերպման և անցկացման կանոնակարգ
4. Դասղեկի աշխատանքային գործառույթների կազմակերպման եվ իրականացման կարգ
5. Բարեվարքության (էթիկայի) կանոնակարգ
6. Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների և շրջանավարտների հարցման կարգ
7. Գործատուների կողմից շրջանավարտների վերաբերյալ գոհունակության հարցում-գնահատման կարգ
8. Մանկավարժական Խորհրդի կանոնադրություն
9. Ծնողական Խորհդի կանոնադրություն
10. Մեթոդական միավորումների/ առարկայական հանձնախմբերի կանոնադրություն

Կատարվել են հարցումներ՝ «Ուսումնարանի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների և շրջանավարտների հարցման» կանոնակարգի համաձայն, վերլուծվել են արդյունքները, քննարկվել և կիրառվել են համապատասխան միջոցներ բացթողումների շտկման համար:
Կազմակերպվել են սեմինարներ՝ մանկավարժների մասնագիտական գիտելիքների որակի և համակարգչային գրագիտության բարձրացման, նոր մեթոդների ներդրման և ստեղծագործական աշխատանքի զարգացման նպատակով: Խորհրդատվական աշխատանքներ են տարվել սկսնակ մանկավարժների հետ: Անցկացվել են դասալսումներ, բաց դասեր, քննարկումներ, որոնք նպաստել են թերությունների շտկմանն ու վերացմանը:

Կատարվել է 2021-2022 ուսումնական տարվա գործունեության ներքին գնահատում. ձևավորվել է հանձնաժողով, որի մեջ ներգրավվել են ուսումնարանի վարչական աշխատողներ, մեթոդմիավորման նախագահներ, կառավարման խորհրդի և ուսանողական համակազմից անդամներ: Իրականացվել է ներքին գնահատումը և քննարկվել կոլեգիալ կառավարման խորհրդի նիստում:

Հաշվապահական, ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունները, սահմանված կարգով, ժամանակին կազմվել, քննարկվել են կառավարման խորհրդում և ներկայացվել համապատասխան մարմիններին:
Հաստատության ֆինանսական գործունեությունն իրականացվել է Խորհրդի կողմից հաստատված նախահաշիվների և գնումների պլանների համաձայն:

Ուսումնարանում ռազմահայրենասիրական դաստիարակության շրջանակում իրականացվել են բազմաբնույթ միջոցառումներ:
Դաստիարակչական աշխատանքների շնորհիվ ազգային բանակ զորակոչված ուսանողներն աչքի են ընկել մարտական ու զինվորական կարգապահությամբ, օրինակելի ծառայությամբ:

Զինվորական ծառայության մեջ գտնվող բազմաթիվ ուսանողներ 2022 թվականի ընթացքում պաշտպանության նախարարության և զորամասերի հրամանատարության կողմից ստացել են խրախուսանքներ:

Ուսումնարանում գործում է կարերիայի կենտրոն, որի աշխատանքի արդյունքում ընդլայնվել է համագործակցող գործատու կազմակերպությունների շրջանակը:
2022 թվականի ընթացքում Կարիերայի ուղղորդման կենտրոնը իրականացրել է 17 սեմինար, 2 այցելություն:

Իրականացվել է հաստատության զարգացման ծրագրով 2022-2023 ուստարում նախատեսված հետևյալ աշխատանքները.

- 2022թ. «Ընտանիք» ԲՀԿ-ի նախաձեռնությամբ և ֆրանսիական ԻՕվղը Դողիան կազմակերպության ֆինանսավորմամբ հիմնանորոգվել և շահագործման է հանձնվել 824քմ տարածք, որը տրամադրվել է «Ոսկերչություն», «Գեղանկարչություն և քանդակագործություն», «Համակարգիչների շահագործում», «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում», «Վերականգնող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտական արհեստանոցների և սպորտային դահլիճի համար:
- Հիմնանորգված տարածքները ապահովվել են սանհանգույցներով, վերելակով ջեռուցման և անվտանգության համակարգերով
- Սպորտ դահլիճի գույքի համալրում
- աշխատաշուկայի պահանջների փոփոխությանը զուգընթաց նոր՝ «Ջերմոցային տնտեսության» մասնագիտության ներդրման նախադրյալների ստեղծում
- ուսանողական ընկերությունների գործունեության խթանում, ուսանողների ձեռնարկատիրական հմտությունների զարգացում
- կառավարման արդյունավետության բարձրացում՝ վերահսկող նոր մեխանիզմների ներդրում
- աշխատանքի անվտանգությանն և առողջության ապահովման կրթական գործընթացի բարելավում՝ « Անվտանգության ցուցանակ»-ների պատրաստում
- մանկավարժական կազմի ուսումնամեթոդական և մասնագիտական վերապատրաստումներ
- GIZ, «Բիզնես և Կրթություն Գործընկերություն», «ՄԿՈՒ-Համագործակցություն Հարավային Կովկասում», «Հայկական Կարիտաս» ԲՀԿ հետ համագործակցության զարգացում, միջազգային կրթական ծրագրերի մասնակցություն «Էրազմուս+», «Action Against Hunger», «Դպրոցական սնունդ», ETF GLAD Network /Եվրոպական վերապատրաստումների հիմանդրամ/ կազմակերպությունների համագործակցությամբ

- հաստատության գործունեության հրապարակայնության և թափանցիկության ընդլայնում՝ «Բաց դռների օր» և նմանատիպ միջոցառումների կազմակերպում, «Աշխատանքի տոնավաճառ»-ների մասնակցություն, կայքէջերում հաստատության ֆինանսական և այլ գործունեությունների լուսաբանում: Կազմակերպվող աշխատանքներում ծնողների, ուսանողների, ՀԿ-ների և այլ կառույցների ներգրավում
- համագործակցության ընդլայնում
- ուսանողական Խորհրդի աշխատանքների ակտիվացում
- լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացում
- դասավանդման որակի և արդյունավետության բարձրացման վերաբերյալ մեխանիզմների և կանոնակարգերի մշակում

Շենքում առկա է հակահրդեհային, ջեռուցման և տեսանկարահանման համակարգեր: 2022թ. «Ընտանիք» ԲՀԿ-ի նախաձեռնությամբ և ֆրանսիական ԻՕվրը Դողիան կազմակերպության ֆինանսավորմամբ հիմնանորոգվել և շահագործման է հանձնվել 824քմ տարածք: Վերոնշյալ կազմակերպությունները կազմակերպել են նաև 150 անապահով ուսանողների անվճար սնվելու հարցը և խոհարար մասնագիտությամբ սովորողների գործնական դասերի լիարժեք անցկացումը նորակառույց ուսումնական խոհանոցում:
Շենքային պայմանների բարելավման աշխատանքները կավարտվեն բուժկետի, ուսումնական զենքի սենյակի ստեղծման և շենքի արտաքին երեսապատումից հետո:

Ուսումնարանը շարունակում է համագործակցությունը «Բիզնես և կրթություն գործընկերություն» հիմնադրամի հետ, նպատակ ունենալով զարգացնել ուսանողական ընկերությունների գործունեությունը, միջազգային «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում իրականացնել փորձի փոխանակում ԱՀՈՒ կրթության, ուսումնարանի աշխատանքների գնահատում և միջազգայնացում:

2022 թվականին իրականացվել են սովորողների դաստիարակչական աշխատանքներ, կազմակերպվել են միջոցառումներ, անցկացվել են զրույցներ ուսանողների հետ նրանց վարքը ուղղելու, դասերին ներգրավվելու և այլ թեմաներով, կատարվել է միջոցառումներին մասնակցող սովորողների և աշխատողների միջև պարտականությունների բաշխում համապատասխան հանձնարարականների կատարման արդյունավետության հսկում, անհրաժեշտության դեպքում նաև աջակցություն:

Ուսումնարանում ստեղծվել են նպաստավոր պայմաններ ազատ ժամանցի կազմակերպման միջոցով ապահովելու ուսանողների ստեղծագործական ունակությունների զարգացումը, վարքի շեղումների կանխարգելումը, հոգևոր, գեղագիտական, բնապահպանական, ռազմահայրենասիրական և ֆիզիկական դաստիարակությունը՝ հաշվի առնելով նրանց հետաքրքրությունները, հակումներն ու ընդունակությունները:
Ուսումնարանում բացի նախատեսված կրթադաստիարակչական միջոցառումների և բաց դասերի իրականացվել են նաև մասնակցություն Աշխատանքի տոնավաճառների և ցուցահանդես – վաճառքների:

- Կարիերայի ուղղորդման կենտրոնի ղեկավար Կ. Ղարագյոզյանի ղեկավարությամբ ուսանողները մասնակցել են «Հայկական Կարիտաս» ԲՀԿ նախաձեռնությամբ կազմակերպված «Ես կարող եմ» աշխատանքի տոնավաճառին:

- «ԵՄ հանուն մշակույթի. առավել ուժեղ համայնքներ և տեղական նախաձեռնություններ» ծրագրի շրջանակներում ուսումնարանի ուսանողները իրենց ստեղծագործական աշխատանքները ներկայացրել են Միեր Մկրտչյան հուշատուն - թանգարանում՝ կազմակերպելով ցուցահանդես վաճառք:
- Ուսումնարանի «Առողջ սերունդ», «Արևոտ Շիրակ», «էկոտոպրակներ», «Ազգային հուշանվերներ» ուսանողական ընկերությունների մասնակցել են ««Աշակերտական/ուսանողական ընկերություն» կրթական մոդելի ներդրումը Հայաստանում» խորագրով համաժողովին:
- Թանգարանների գիշեր միջոցառումների ընթացքում կազմակերպվել է «Ազգային հուշանվերներ» ուսանողական ընկերության արտադրանքների ցուցահանդես վաճառք:
- Մասնակցել են Գյումրու Երիտասարդական պալատի կողմից կազմակերպված ձեռագործ աշխատանքների ցուցահանդես վաճառքին:
- Մասնակցել են «Գյումրի. վարպետաց քաղաք» փառատոնին: Ուսանողներն ու վարպետ-դասախոսները, բացի ձեռակերտ նմուշները ցուցադրելուց, անցկացրել են վարպետության դասեր հետաքրքրված այցելուների հետ:
- *Հայաստանում ֆրանսիական համալսարանը* հյուրընկալել է Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի «Ուսանողական ընկերությունների», «Գաղափարից բիզնես» սոցիալական ձեռնարկության և կարճաժամկետ ուսուցման ծրագրերի մասնակից, արցախյան պատերազմում վիրավորում ստացած երիտասարդներին, ովքեր Ամանորյա տոնավաճառ - ցուցահանդես վաճառքին ներկայացրել էին իրենց ձեռքի աշխատանքները: Վաճառքից ստացված հասույթն ուղղվելու է նրանց նոր գաղափարները կյանքի կոչելուն:

Սեմինարաներ

- Ուսումնարանը հյուրընկալել է Էմիլի Արեգակ կազմակերպության հոգեբան Կարինե Միրզոյանին, ով անցկացրեց սեմինար-պարապմունք «Հաշմանդամություն ունեցող երեխաների խնդիրները և ներառական կրթության դերը» թեմայով:

Մասնագիտական կողմնորոշման դասեր

- Կազմակերպվել է շրջայցեր Գյումրու տարբեր դպրոցներ, որտեղ իրականացվել են մասնագիտական կողմնորոշման դասեր:
- Ուսումնարանում կազմակերպվել են «Բաց դռների օր» միջոցառում, որի շրջանակներում հյուրնկալվել են Գյումրու և հարակից համայնքների հիմնական և ավագ դպրոցների աշակերտներ, ովքեր մասնակցեցլ են տարբեր մասնագիտությունների գործնական աշխատանքներին և ծանոթացել ուսանողների պատրաստած աշխատանքներին:

Հանրապետական մրցույթ

- «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում» և «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտությամբ ուսանողներն մասնակցեցին Վանաձորում կայացած «Երիտասարդ Նորարարներ – Ապագա Առաջնորդներ» Հեքըթոնին և գրավեցին 3-րդ տեղը: Նրանք իրավունք վաստակեցին այց կատարելու Վրաստան և մասնակցելու SS միջոցառման, իսկ թիմի 2 մասնակից՝ անվճար մասնակցելու ԳՏՏԿ մեկ ծրագրավորման դասընթացի:

Միջազգային մրցույթ

- Ուսումնարանի ուսանողները Գագարինի յոթերորդ միջազգային փառատոնին մասնակցեցին իրենց ստեղծագործական աշխատանքներով և գրավեցին առաջին և երկրորդ տեղերը: «Ոսկերչություն» մասնագիտություն՝ «Գագարինի շուրջերկրյա թռիչքը» մետաղյա քանդակ, գրավեց առաջին տեղը, «Գեղանկարչություն և քանդակագործություն» մասնագիտություն՝ փայտե հարթաքանդակ, գրավեց երկրորդ տեղը:

Փորձի փոխանակում, վարպետաց դաս

- Ուսումնարանի 23 ուսանողներ՝ դասախոս Հ.Մարմարյանի նախաձեռնությամբ, մասնակցեցին «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի» և Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի կողմից կազմակերպած սեմինարին, որի ընթացքում տեղի ունեցավ «Միջառարկայական երկխոսության ստեղծում գիտության և արվեստի բնագավառում» պանելային քննարկում: Այն առանձնահատուկ էր իր տեսակի մեջ, քանի որ ներառում էր «Կայուն բաղադրյալ նյութեր», «Սենսորային ճարտարագիտություն» և տարաբնույթ հետազոտական թեմաների վերաբերյալ հետաքրքրաշարժ նյութեր:
- Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի գրադարանավար Ս. Հակոբյանը և Ուսանողական խորհուրդը հյուրընկալվել էին Գեղագիտության ազգային կենտրոնի գրական ստուդիայում՝ գրող-ընթերցող անմիջական շփումը երկուստեք կարևորելու համատեքստում:
- **Ո**ւսումնարանը ԱՀ ԿԳՄՄՆ հետ կնքած հուշագրի համաձայն 6 օրով հյուրընկալեց՝ «Շուշիի Արսեն Խաչատրյանի անվան պետական հումանիտար քոլեջ» -ին, Եզնիկ-Մոզյանի և Մարտունու արհեստագործական ուսումնարաններին, «Անտոնիա Արսլան հայ-իտալական կրթահամալիր» հիմնադրամի ուսանողներին և մանկավարժական հանրույթին, նրանց համար կազմակերպվեց վերապատրաստումներ, վարպետաց դասեր և սեմինարներ:
- Վարպետաց դաս «Միասին» Հիմնադրամում: «Խոհարարական գործ՝ խոհարար» մասնագիտության ուսանողները սովորեցին պատրաստել «Կրուասան» թխվածքը
- Հյուրանոցային, ռեստորանային և սրճարանային բիզնեսին վերաբերող վարպետաց դաս՝ կազմակերպված «ՊրոՐեԿա» /"ProReCa"/ ընկերության կողմից՝ «Խոհարարական գործ՝ խոհարար» մասնագիտության ուսանողների մասնակցությամբ :

Փորձարարական «Սոցիալական ձեռնարկություն»

- **2022-2023** ուսումնական տարվանից սկսած ուսումնարանի լավագույն ձեռք ունեցող ուսանողներից և շրջանավարտներից կազմվել է աշխատանքային խումբ, տրամադրվել առանձնացված տարածք, որպեսզի նրանք կարողանան սեփական գիտելիքներն ու կարողությունները ներդնելով ստեղծեն ապրանքներ, հմտանան մասնագիտության, աշխատանքային գործունեության, ձեռնարկատիրության մեջ:

Զինղեկ Սասուն Կարապետյանը ապրիլի 1-ից հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում մասնակցել է պահեստազորայինների վարժական եռամսյա հավաքների, որի պատճառով զինղեկի տարեկան պլանով նախատեսված որոշ աշխատանքներ չեն կատարվել:

- Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 1999թ. օգոստոսի 25-ին թիվ 532 որոշմամբ հաստատված կարգի 6 –րդ կետի, ՀՀ պաշտպանության և կրթության գիտության

նախարարների 09.11.2011թ. N1222-Ն 10.11.2011թ. N1356-Ն համատեղ հրամանով հաստատված «Հանրակրթական, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների նախազորակոչային պատրաստության» կանոնադրության և «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի 11-րդ դասարանի ծրագրի պահանջների համաձայն՝ ուսումնական հաստատություններին կցված զորամասերում (54 (հիսունչորս) ուսանողներ՝ 11/տասնմեկ/ աղջիկ, 43/քառասուներեք/ տղա) ուսանողների հետ կազմակերպվել են «Հրաձգություն մարտական փամփուշտներով» մեկօրյա ռազմադաշտային գործնական պարապմունքներ:

- Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ուսանողական խորհրդի առաջարկությամբ և զինղեկ Ս.Կարապետյանի նախաձեռնությամբ, ուսանողներից մի քանիսը այցելել են Իջևանի թիվ N զորամասի մարտական դիրքեր:

ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի «Գեղանկարչություն և քանդակագործություն» մասնագիտության երկրորդ կուրսի ուսանող Համլետ Պարսամյանը Հայաստանի Հանրապետության ՁՅՈՒԴՈՅԻ պատանիների առաջնությունում, 66 կգ քաշային կարգում գերազանց հանդես գալով զբաղեցրել է պատվավոր առաջին մրցանակային տեղը:
- Շիրակի մարզի տարբեր ուսումնական հաստատությունների սովորողների միջև անցկացվել է հանրապետական սպարտակիադա և բազկամարտի Շիրակի մարզային փուլի մրցումներում «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ – ի I կուրսի ուսանող **Ռշտունի Վարդանը** /55 կգ քաշային կարգում/ զբաղեցրել է երկրորդ մրցանակային տեղը:
- «Երվանդ և Արտաշես Ջեյրանյաններին նվիրված ծանրամարտի պատանիների և դեռահասների բաց առաջնությունում» «Համակարգիչների շահագործում» մասնագիտության երկրորդ կուրսի ուսանող **Կարապետ Մկրտչյանը** 55 կգ քաշային կարգում 177 կգ երկամարտի գումարով զբաղեցրել է առաջին պատվավոր տեղ:
- «Երվանդ և Արտաշես Ջեյրանյաններին նվիրված ծանրամարտի պատանիների և դեռահասների բաց առաջնությունում» «Ոսկերիչ» մասնագիտության առաջին կուրսի ուսանող **Սուրեն Խաչատրյանը** 89 կգ քաշային կարգում 225 կգ երկամարտի գումարով զբաղեցրել է առաջին պատվավոր տեղ:
- 2022 թվականին «Ոսկերիչություն՝ ոսկերիչ» մասնագիտության II կուրսի ուսանող **Սարգիս Առաքելյանը** բազմիցս մասնակցել է լողաոճի որակավորման մրցումների և տարել հաղթանակներ՝ զբաղեցնելով I, II տեղեր:
- Երևանում անցկացված Հայաստանի պատանիների առաջնության «Թրասուսեր» մարզաձևում II պատվավոր տեղ զբաղեցրեց «Խոհարարական գործ՝ խոհարար» առաջին կուրսի ուսանող **Վարդգես Համբարձումյանը**:
- անցկացված ՁՅՈՒԴՈՅԻ Հայաստանի Հանրապետության մեծահասակների առաջնությունում «Գեղանկարչություն և քանդակագործություն, փորագրող՝ փայտյա գեղարվեստկան իրերի» երրորդ կուրսի ուսանող **Համլետ Պարսամյանը** զբաղեցրել է 3-րդ տեղ (73կգ):

ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Մարտի 25-28**-ը **Նորվեգիայի Համեր** քաղաքում կայացած հրաձգության Եվրոպայի առաջնությունում յուրահատուկ մրցելույթներ ունեցավ «Համակարգիչների շահագործում» մասնագիտության երրորդ կուրսի ուսանող Գոռ Խաչատրյանը՝ 3 վարժությունում /վազող թիրախ, խառը վազք և միքս/ դարձավ ոսկե մեդալակիր /շնորհվել է երեք ոսկյա մեդալ/:
- **Օգոստոսի 1-9** Ֆրանսիայի Շատորու քաղաքում կայացած վազող թիրախ մրցաձևի Աշխարհի առաջնությանը **Գոռ Խաչատրյանն** երիտասարդների պայքարում մրցեց 10մ վազք, 20+20 կրակոց վարժությունում: Խոցելով 386 միավոր կրկնեց աշխարհի երիտասարդների ռեկորդը և նվաճեց աշխարհի չեմպիոնի տիտղոսը:

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

- ՄԿՈՒՀԱԿ-ի կողմից ՄԿՈՒ հաստատությունների մանկավարժական աշխատողների վերապատրաստման դասընթացներին մասնակցեցին ուսումնարանի 9 դասախոս-վարպետներ
- Ուսումնարանի երկու դասախոս մասնակցել են ՄՀՋ ՄԿՈՒ Գերմանական միջազգային համագործակցություն ընկերության կողմից կազմակերպած «Ռիսկերի կառավարում զբոսաշրջության ոլորտում» աշխատաժողովին: /Մարգարյան Աննա, Պետոյան Անի/
- Հինգ դասախոսներ մասնակցել են զբաղվածության ոլորտում կիրառվող նորարարական և ներառական «SHUTTLE» մեթոդաբանության ներկայացման 5-օրյա աշխատաժողովին /Ավետիսյան Սուսաննա, Մաղաքյան Հերմինե, Ղարագյոզյան Կիմա, Բարսեղյան Ժենյա/
- Կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատու Կիմա Ղարագյոզյանը, ավագ վարպետ Սուսաննա Ավետիսյանը և մանկավարժ Ժենյա Բարսեղյանը մասնակցել են Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) և Action Against Hunger (AAH) միջազգային կազմակերպության կողմից կազմակերպված «Տեղահանված և տեղաբնակ խոցելի խմբերի տնտեսական և սոցիալական ներգրավածությունը Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում եռօրյա աշխատաժողովին: Աշխատաժողովի ընթացքում ուսումնասիրել են «Shuttle» մեթոդաբանություն: Վերապատրաստված դասախոսներ Կ. Ղարագյոզյանը և Ժ. Բարսեղյանը, «Փափուկ հմտությունների ձեռքբերում» թեմայի շրջանակներում, ուսումնարանի ուսանողների համար անցկացնում են 4-ամսյա դասընթաց
- «ԵՄ կողմից կազմակերպված ՄԿՈՒ ոլորտի կարողությունների զարգացման ծրագրեր»-ին նվիրված տեղեկատվական հանդիպում Հայաստանում Էրազմուս+ ծրագրի ազգային գրասենյակի անդամների հետ

Առցանց վերապատրաստումներ.

- ETF GLAD Network, /Եվրոպական վերապատրաստումների հիմանդրամ/, որին մասնակցել են տնօրեն Ք. Ահարոնյանը, տնօրենի օգնական Հ. Մինասյանը, տնօրենի տեղակալ Ա. Մկրտչյանը
- GLAD ցանցային հանդիպում աշխատանքի վրա հիմնված ուսուցման վերաբերյալ / Թեմաներ՝ Երկակի կամ WBL, Հմտությունների կառավարում, Գործընկերություն ՏԿԱ շահագրգիռ կողմերի միջև Առցանց հանդիպում, բաց բոլոր երկրների համար/
- Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ) և Մարդկային կապիտալի զարգացումը ցմահ ուսուցման համատեքստում (համաժողով՝ կազմակերպված LLLP-ի հետ) / Թեմաներ. Գործընկերություն ՏԿԱ շահագրգիռ կողմերի միջև, քաղաքացիական

հասարակության դերը հմտությունների զարգացման կառավարման գործում: Հիբրիդային հանդիպում (առցանց բաց է բոլոր մասնակիցների համար)/

- GLAD ցանցային հանդիպում Հայաստանում աշխատանքի վրա հիմնված ուսուցման վերաբերյալ / Թեմաներ՝ պետական-մասնավոր համագործակցություն աշխատանքի վրա հիմնված ուսուցման համար (տարբեր ձևեր), հմտությունների զարգացման կառավարում/
- GLAD ցանցային հանդիպում աշխատանքի վրա հիմնված ուսուցման վերաբերյալ. հետևում / Թեմաներ. ինչպես են շահագրգիռ կողմերը ներգրավված աշխատանքի վրա հիմնված ուսուցման մեջ: Երկրների ուսումնասիրությունների արդյունքները՝ Ալբանիա, Չեռնոգորիա, Սերբիա: Առցանց հանդիպում, բաց բոլոր երկրների համար/
- Երիտասարդական երաշխիքներ և քաղաքացիական հասարակության կազմակերպություններ
- Չորս դասախոսների և բուժքույրի մասնակցություն «Երեխաների և դեռահասների հոգեկան առողջության և զարգացման խանգարումներ» խորագրով առցանց սիմպոզիումին՝ նվիրված պրոֆեսոր Կոնստանտին Դանիելյանի հիշատակին:

Վերապատրաստման դասընթացներից հետո աշխատակիցները իրենց փորձն են կիսել մասնագիտական հանձնախմբի մյուս անդամների հետ:

ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԾՐԱԳԻՐ

- Սեպտեմբեր – դեկտեմբեր ամիսներին ուսումնարանի և «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի միջև կնքած ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրի համաձայն իրականացվել է «Ոսկերչություն» մասնագիտությամբ կարճաժամկետ ծրագիրը, 44 օրյա պատերազմի ընթացքում վիրավորում ստացած երիտասարդի համար :

Համագործակցություն

Ստեղծման պահից ուսումնարանը համագործակցում է տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների հետ
2018-ից - Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (GIZ)
2018 թ-ից «Մ Ի Ա Ս Ի Ն» բարեգործական հիմնադրամ
2019-ից գերմանական «Մասնագիտական կրթություն և ուսուցում (ՄԿՈՒ)-համագործակցություն Հարավային Կովկասում»
2019թ-ից «Հայկական Կարիտաս» ԲՀԿ
2019թ –ից «Բիզնես և կրթություն-գործընկերություն» հիմնադրամ
2019թ-ից Գերմանիայի Մեկլենբուրգ–Ֆորպոմերանիա Դաշնային տարածաշրջանային էկոնոմիկայի ուսումնական կենտրոն
2019թ-ից Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն «ՍԻՎԻՏԱՍ» ՀԿ
2020թ.-ից «Ֆերտի» ԲՀԿ ,
2020թ.-ից «Միացյալ ազգերի զարգացման ծրագրեր» (ՄԱԶԾ)
2020թ.-ից «Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ» (ԳԷՀ)
2020թ.-ից «Փոքր դրամաշնորհների ծրագր» (ՓԴԾ)
2021թ.-ից Ֆրանսիական «L’Œuvre d’Orient» կազմակերպություն
2021թ.-ից ՄԱԿ-ի զարգացման ծրագիր և «Կոլբա լաբ»
2022թ. Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (BMZ)

2022թ" Action Against Hunger (AAH) /Ակցիա ընդդեմ սովի/ միջազգային կազմակերպության

Միջոցառումները լուսաբանվել են ԶԼՄ-ներով, հայկական կրթական պորտալում /www.armedu.am/ և հաստատության /www.gyumriusumnaran4.am/ կայք էջում:

- **Հունիսի 16** Արհեստագործական որոշ ուսումնարաններում արեւային կայանների մոնտաժ կսովորեն — Հայաստանի Հանրային Ռադիո (armradio.am) հոդվածում լուսաբանվել է «Ֆերտի» ՀԿ-ի, «Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամի և ուսումնարանի համագործակցության արդյունավետությունը:
- **Հուլիսի 13-ին** «Ալիք» լրատվական կայք էջի «Երբ գործընկերդ արեւն է | Aliq Media Armenia» խորագրով հոդվածում լուսաբանվել է ուսումնարանի և «Ֆերտի» ԲՀԿ-ի համագործակցությունը
- **Նոյեմբերի 7 ուսումնարանի** «Գաղափարից բիզնես» փորձարարական ձեռնարկությունը հյուրընկալել էր **Ֆրանսիական «Le Pelerin»** քրիստոնեական շաբաթաթերթի լրագրողներին, ովքեր հետագայում՝ դեկտեմբերի վերջին թողարված համարում լուսաբանեցին ուսումնարանի, սոցիալական ձեռնարկության, ուսանողական ընկերությունների գործունեությունը:

Պահանջվող համապատասխան հաշվետվությունները գործող կարգերի համաձայն ժամանակին ներկայացվել է նախարարություն:

Տնօրեն՝ Ք. Ահարոնյան